ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

14 օգոստոսի 2019 թվականի թիվ 91-Ա

ք. Երևան

ԷՐՈՏԻԿ ԲՆՈՒՅԹԻ, ՍԱՐՍԱՓ ԵՎ ԱԿՆՀԱՅՏ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ (ՖԻԼՄԵՐԻ), ԱՅԼ ՏԵՍԱՁԱՅՆԱՇԱՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածով՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշում է.***

1. Սահմանել էրոտիկ բնույթի, սարսափ և ակնհայտ բռնություն պարունակող հեռուստառադիոհաղորդումների (ֆիլմերի), այլ տեսաձայնաշարային նյութերի որոշման չափորոշիչները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պատշաճ իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

14 օգոստոսի 2019թ.
ք. Երևան

Հավելված
Սահմանված է
Հեռուստատեսության և
ռադիոյի հանձնաժողովի
2019 թվականի օգոստոսի 14-ի
թիվ 91-Ա որոշմամբ

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

ԷՐՈՏԻԿ ԲՆՈՒՅԹԻ, ՍԱՐՍԱՓ ԵՎ ԱԿՆՀԱՅՏ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ (ՖԻԼՄԵՐԻ), ԱՅԼ ՏԵՍԱԶԱՅՆԱՇԱՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ

էրոտիկ բնույթի, սարսափ և ակնհայտ բռնություն պարունակող հեռուստառադիոհաղորդումների (ֆիլմերի), այլ տեսաձայնաշարային նյութերի որոշման չափորոշիչներն են՝

1. էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումների (ֆիլմերի), այլ տեսաձայնաշարային նյութերի դրվագներում՝

ա) երբ սեռական հարաբերությունների տեսարանները (այդ թվում, անիմացիոն եղանակով) կոպտորեն խախտում են սեռական վարմունքի սոցիալապես ընդունված կանոնները, այն է. ցուցադրվում են խմբակային սեռական հարաբերությունների պատկերներ, սեռական հարաբերությունների սադոմազոխիստական եղանակներ և այլն,

բ) երբ տղամարդու կամ կնոջ սեռական օրգանները պատկերվում են խոշոր պլանով, նկարահանումների ուղիղ ռակուրսով, սեռական հարաբերությունների այս կամ այն դետալը ֆիքսելու համար,

գ) երբ սեռական բնույթի պատկերները նկարահանված են միայն սեռական գործողությունը ցուցադրելու համար, և բացակայում է սեռական հարաբերությունների գեղարվեստական (էսթետիկական) բաղադրիչը,

դ) երբ սեռական հարաբերությունները խոսքի կամ ձայնի ուղեկցությամբ պարունակում են սեռական գործողության մանրամասներ,

ե) երբ սեռական գործողությունների պատկերները ոտնահարում են բարոյական նորմերն ու արժեքները, վիրավորում եմ մարդու արժանապատվությունը, նրան սեռական մանիպուլյացիաների զոհ են դարձնում,

զ) երբ սեռական գործողություններն ուղեկցվում են կոպիտ, գռեհիկ արտահայտություններով:

2. Սարսափ և ակնհայտ բռնություն պարունակող են համարվում այն հեռուստառադիոհաղորդումները (ֆիլմերը), այլ տեսաձայնաշարային նյութերը, որոնք ցուցադրում են՝

ա) վախի, տագնապի, անելանելիության զգացում հարուցող կամ սոսկում առաջացնող տեսարաններ կամ ձայնաշար,

բ) մարդկանց, ինչպես նաև կենդանիների խոշտանգումների, կտտանքների ենթարկելու, ֆիզիկական կամ հոգեկան ցավ պատճառելու, խոշտանգված մարմինների մանրամասների և արյունահեղ տեսարաններ, ինչպես նաև ծրագրերում ողջունվում է բռնությունը կամ ցանկալի են դարձնում բռնության գործադրումը։

3. Ժամը 6.00-24.00 ընկած ժամանակահատվածում ցուցադրվող հաղորդումները չեն կարող պարունակել վերը շարադրված էրոտիկ դրվագներ և սեռական գործողության, ինչպես նաև սարսափ և ակնհայտ բռնություն պարունակող տեսարաններ։